ՔԱՐՈԶԽՕՍԱԿԱՆ

ՎՐԹԱՆԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԲԲԱՀԱՄԵԱՆԻ ԽԱՒԱՐՄԱՆ ԳԻՇԵՐՈՒԱՅ ՔԱՐՈԶԸ՝ ԽՕՍՈՒԱԾ Ս. ՅԱԿՈԲԵԱՆՑ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ

(18 Ապրիլ, 2025)

«Աստուած իմ, Աստուած իմ, ինչո՞ւ ինձ թողեցիր»
(Մատթ. ԻԷ:46)

Սիրելի հաւատաւոր եղբայրներ եւ քոյրեր,

*Խաւարման այս երեկոյեան մենք կանգնած ենք Քրիստոսի խաչելութեան առաջ։ Այնքան իրական էին Փրկչի տանջանքներն ու ցաւերը, որ նոյնիսկ ստիպուած է լինում արտասանել. «**Էլի՛, էլի՛, լամա սաբաքթանի**», **Աստուա՛ծ իմ, Աստուա՛ծ իմ, ինչո՞ւ թողեցիր ինձ**»։ Խաչի վրայ արիւնաքամ լինող Փրկչի՝ սաղմոսից քաղուած այս բառերը ամբողջութեամբ մեզ են փոխանցում այն տագնապը, ցաւը եւ յուսալքութեան սարսափը, որ մեր Տէրը զգում էր Իր տառապանքի վերջին ժամերին։ Այո՛, Նա իրապէս տառապում էր եւ ցաւ էր զգում՝ ինչպէս սովորական մարդ, միեւնոյն ժամանակ հասնում էր մարդկային ցաւի եւ տառապանքի գագաթնակէտին՝ Աստծուց մոռացուած լինելու զգացումին։*

Մեր հայրերը Քրիստոսի երկրային կեանքի վերջին շաբաթը անուանել են «Աւագ Շաբաթ», որովհետեւ այդ մէկ շաբաթուայ օրերի մէջ խտացուած է Յիսուս Քրիստոսի փրկագործութիւնը եւ աշխարհ գալու ամբողջ նպատակը։ Ուստի իրաւամբ այդ շաբաթը անուանում են նաեւ «Աւետարան Աւետարանի մէջ»։

Հաւատքով եւ երկիւղածութեամբ հետեւելով սուրբգրային պատումի ընթացքին՝ մենք էլ մտովի տեղափոխւում ենք Աւագ Շաբաթուայ իրադարձութիւնների մէջ, որը սկսւում է մեռած Ղազարոսին կենդանութիւն տալով եւ Երուսաղէմ փառաւոր ու յաղթական մուտքով։ Ցնծութիւն, ուրախութիւն եւ մեծ սպասելիքներ ունեցող ժողովուրդը, չհասկանալով Տիրոջ գերնպատակները, որոնք կապուած էին մարդկային ցեղի հոգեփրկութեանը եւ մեղքի կապանքներից ազատուելուն, հրեայ կրօնապետերի կողմից ատելութեան հրահրումով ու ուղղորդումով, մի քանի օր յետոյ պահանջում է խաչը հանել Յիսուսին։

Սկսւում է աստուածային նախախնամութեամբ սահմանուած մարդկային եւ աստուածային մի մեծ ողբերգութիւն՝ ուրացում իւրայինների կողմէ, դաւաճանութիւն աշակերտի կողմէ, սուտ եւ անհիմն վկայութիւններ, անարդար դատավարութիւններ, Արդարի դէմ ծաղրանք ու շարշարանքներ եւ ի վերջոյ Օծեալի նկատմամբ խաչելութեամբ մահուան դատավճիռ։

Ցաւօք սրտի, այսօր մեր կենցաղի անբաժանելի մասն է դարձել սուտ խօսելը եւ սուտ վկայութիւն տալը, կաշառքով անմեղ մարդկանց մատնելը եւ պատժի ենթարկելը, հայրենիքն ու հաւատը ուրանալը։ Եւ ամէն անգամ, երբ մենք այս արարքներն ենք գործում,

նորից ու նորից միանում ենք այն ամբոխին, որ գոռում էր. «Խաչը հանիր դրան...»։ Այս ամէնը այնքան արագ էր տեղի ունենում, որ կարծես թէ մարդկային միտքը չէր հասցը-նում ընկալել այն, ինչ նախատեսուած էր աստուածային նախախնամութեամբ։

Այսօր, երբ մեր Եկեղեցին վերապրում է Սուրբ Խաչի խորհուրդը, մենք մեր սրտե-րում կրում ենք մի այլ խաչ՝ մեր սիրելի Արցախի կորստի ցաւը։ Մեր ազգի զաւակները նոյնպէս անցնում են դաժան այդ խաչի ճանապարհով։ Սակայն ի տարբերութիւն մեզ, մեր Տէրը խաչուեց անմեղութեամբ, իսկ մենք՝ որպէս մեղաւորներ, չգիտակցեցինք ու չապաշխարեցինք։ Ինչպէս Տաճարի վարագոյրն է պատռուած երկու մասի, այդպէս էլ մեր հայրենի հողն է պատռուած իր ամբողջութիւնից։ Քրիստոսի տանջանքների նման մեր ցաւը եւս շատ իրական է՝ մաշկի պէս մեր վրայ է։ Ոմանք կորցրել են տուն, ուրիշ-ներ՝ հայր, որդի, եղբայր, իսկ բոլորս միասին՝ Սրբազան Հայրենիք։ Մենք էլ, յաճախ մեզ Աստծուց մոռացուած զգալով, կրկնում ենք. «Աստուա՛ծ իմ, Աստուա՛ծ իմ, ինչո՞ւ ես ինձ թողել...» Խէ՞.. խէ՞ հինչո՞ւ հետէ... *եւ մեր աղօթքները յաճախ բախւում են լռութեան պատին։ Բայց հէնց այստեղ է, սիրելինե՛ր, որ Սուրբ Խաչը սկսում է խօսել մեզ հետ։*

Սուրբ Պողոս Առաքեալն ասում է. «Խաչուած Քրիստոսը՝ Աստծու զօրութիւնն է եւ Աստծու իմաստութիւնը» *(Ա Կորնթ. Ա։24)։ Մարդկային իմաստով խաչը պարտութիւն էր, բայց Աստծու աչքով՝ այն յաղթութեան սկիզբն էր։ Արցախը մեր խաչն է՝ որպէս ժողո-վուրդ, մեր սրբութիւնը, որ կորցրինք։ Բայց արդեօ՞ք այն ամբողջովին կորաւ։ Քրիս-տոսի խաչը նոյնպէս «կորուստ» թուաց աշակերտներին։ Բայց Նա յարութիւն առաւ, եւ այդ յարութիւնը բոլոր խաչերը դարձնում է նոր լոյսի ակունք։*

Սիրելինե՛ր, եթէ մեր մէջ ապրում է արդարութեան ծարաւը, եթէ շարունակում ենք աղօթել սրտանց ու ապրել քրիստոնէական սիրոյ մէջ՝ իբրեւ ազգ, ապա համոզ-ւած եղէք, որ Արցախը չի մեռնելու։ Արդեօ՞ք Քրիստոս մնաց գերեզմանում։ Այս խաւա-րային լռութեան մէջ կարծես թէ Քրիստոս հաւաքում է Իր վերջին մարդկային ուժերը եւ արդէն դիմում է մեզ. «Մի՛ վախեցէք նրանցից, որ մարմինն են սպանում, բայց հոգին սպանել չեն կարող»։

Թող մեր Տիրոջ խաչից ճառագող լոյսը զօրացնի ամենքիս՝ յաղթահարելու մեր մեղ-քերն ու վախերը եւ հաւատքով ու յոյսով դիմաւորելու Հրաշափառ Յարութիւնը։